



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԲԴԽ-36-Ո-95**  
**2018թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԿԱՅՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով և 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2018թ. սեպտեմբերի 06  
ք. Երևան

**ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. Սույն հավելվածով սահմանվում է ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային՝ [www.court.am](http://www.court.am) կայքի (այսուհետ՝ Պաշտոնական կայք) կառուցվածքը:

1.2. Պաշտոնական կայքի գլխավոր էջը բաղկացած է վերին, միջին և ներքևի մասերից:

1.3. Պաշտոնական կայքի գլխավոր էջի վերին մասը պարունակում է Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը, Պաշտոնական կայքի անվանումը և հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզվային տարբերակի ցուցիչները:

1.4. Պաշտոնական կայքի գլխավոր էջի միջին մասը պարունակում է Պաշտոնական կայքի բաժինների անվանումները:

1.5. Պաշտոնական կայքի գլխավոր էջի ներքևի մասը պարունակում է Բարձրագույն դատական խորհրդի գտնվելու վայրի քարտեզային պատկերը և կոնտակտային տվյալները (փոստի հասցե, էլեկտրոնային փոստի հասցե, ինտերնետային կայքի հասցե, հեռախոսահամարներ):

1.6. Պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվությունը պարտադիր հրապարակվում է հայերեն լեզվով՝ անհրաժեշտության դեպքում տեղադրվող տեղեկատվությունը ռուսերեն և անգլերեն լեզուներով հասանելի դարձվելու հնարավորությամբ:

1.7. Պաշտոնական կայքի յուրաքանչյուր բաժնի ենթաբաժիններում, իսկ ենթաբաժին չլինելու դեպքում՝ բաժնում, տեղադրվում է հրապարակման ենթակա տվյալ բաժնին կամ ենթաբաժնին վերաբերելի տեղեկատվություն:

1.8. Պաշտոնական կայքում հրապարակման ենթակա տեղեկատվությունը տեղադրվում է տեքստային և (կամ) աղյուսակային, ինչպես նաև փաստաթղթի պատճենի ձևով՝ Պաշտոնական կայքի կառուցվածքի պահանջներին և գետեղվող տեղեկատվության ներկայացման ձևաչափին համապատասխան:

**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ, ԵՆԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

<b>h/h</b>	<b>ԲԱԺԻՆ</b>	<b>ԵՆԹԱԲԱԺԻՆ</b>	<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>
2.1.	Բարձրագույն դատական խորհուրդ	Խորհրդի մասին	Խորհրդի ստեղծման պատմությունը, առաքելությունը, գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները
	Խորհրդի նախագահ	Խորհրդի նախագահի անունը, ազգանունը, կենսագրական տվյալները, ուղերձները, շնորհավորանքները, ելույթները, հրապարակումները	Խորհրդի նախագահի անունը, ազգանունը, կենսագրական տվյալները, ուղերձները, շնորհավորանքները, ելույթները, հրապարակումները
	Խորհրդի անդամներ	Խորհրդի անդամների անունները, ազգանունները, կենսագրական տվյալները	Խորհրդի անդամների անունները, ազգանունները, կենսագրական տվյալները
	Խորհրդի լիազորություններ	Խորհրդի՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով սահմանված լիազորությունները	Խորհրդի՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով սահմանված լիազորությունները
	Խորհրդի աշխատակարգ	Խորհրդի աշխատանքների կազմակերպման մասին	Տեղեկություն խորհրդի աշխատանքների կազմակերպման մասին
	Խորհրդի որոշումներ	Խորհրդի նորմատիվ, ընթացիկ և աշխատակարգային որոշումները, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների	Խորհրդի նորմատիվ, ընթացիկ և աշխատակարգային որոշումները, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների
	Կարգապահական վարույթներ	Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Խորհրդի կողմից ընդունված որոշումները	Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Խորհրդի կողմից ընդունված որոշումները
	Խորհրդի որոշումների նախագծեր	Խորհրդի նորմատիվ, ընթացիկ և աշխատակարգային որոշումների նախագծերը, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների նախագծերի	Խորհրդի նորմատիվ, ընթացիկ և աշխատակարգային որոշումների նախագծերը, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների նախագծերի
2.2.	ՀՀ դատարաններ	Վճռաբեկ դատարան	Տեղեկատվություն Վճռաբեկ դատարանի

	<p>Անհրաժեշտ տեղեկատվություն Դատարանի մասին Անհրաժեշտ տեղեկատվություն Գտնել քարտեզի վրա Դատավորներ Հրապարակումներ</p>	<p>լիազորությունների, վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգի վերաբերյալ, Վճռաբեկ դատարանի դատավորների անունները, ազգանունները, կենսագրական տվյալները, Վճռաբեկ դատարանի գտնվելու վայրը և կոնտակտային տվյալները, հրապարակումները</p>
	<p>Վերաքննիչ դատարաններ Անհրաժեշտ տեղեկատվություն Դատարանի մասին Անհրաժեշտ տեղեկատվություն Գտնել քարտեզի վրա Դատավորներ</p>	<p>Տեղեկատվություն Վերաքննիչ դատարանների լիազորությունների, վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգի վերաբերյալ, վերաքննիչ դատարանների դատավորների անունները, ազգանունները, կենսագրական տվյալները, Վերաքննիչ դատարանների գտնվելու վայրերը և կոնտակտային տվյալները</p>
	<p>Մասնագիտացված դատարաններ Անհրաժեշտ տեղեկատվություն Դատարանի մասին Անհրաժեշտ տեղեկատվություն Գտնել քարտեզի վրա Դատավորներ</p>	<p>Տեղեկատվություն Մասնագիտացված դատարանների լիազորությունների, Մասնագիտացված դատարաններ դիմելու կարգի վերաբերյալ, Մասնագիտացված դատարանների դատավորների անունները, ազգանունները, կենսագրական տվյալները, Մասնագիտացված դատարանների գտնվելու վայրերը և կոնտակտային տվյալները</p>

	<p>Ընդհանուր իրավասության դատարաններ  Անհրաժեշտ տեղեկատվություն  Դատարանի մասին Անհրաժեշտ տեղեկատվություն  Գտնել քարտեզի վրա Դատավորներ</p>	<p>Տեղեկատվություն Ընդհանուր իրավասության դատարանների լիազորությունների, Ընդհանուր իրավասության դատարաններ դիմելու կարգի վերաբերյալ, Ընդհանուր իրավասության դատարանների դատավորների անունները, ազգանունները, կենսագրական տվյալները, Ընդհանուր իրավասության դատարանների գտնվելու վայրերը և կոնտակտային տվյալները</p>
	<p>Օգտակար նյութեր  Դատարան դիմելու կարգը  Դատական ծախսեր  Բողոքարկման կարգը</p>	<p>Տեղեկատվություն դատարան դիմելու կարգի, այդ թվում՝ հայցադիմումի (դիմումի) ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների, ընդդատության կանոնների, դատարան տրվող հայցադիմումների, դիմումների համար, պետական տուրքի դրույքաչափերի վերաբերյալ տեղեկատվություն դատական ծախսերի կազմի և դատական ծախսերի բաշխման կարգի վերաբերյալ, տեղեկատվություն դատական ակտերի բողոքարկման կարգի, այդ թվում՝ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների, բողոքարկման ենթակա դատական ակտերի, բողոք բերելու իրավասություն ունեցող անձանց շրջանակի, բողոք բերելու ժամկետների, բողոքների համար պետական տուրքի դրույքաչափերի վերաբերյալ</p>

		Դատարանների հասցեներ, հեռախոսահամարներ	ՀՀ ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ, վճարել դատարանների, դրանց նստավայրերի գտնվելու վայրերը և հեռախոսահամարները
2.3.	Դատավորների ընդհանուր ժողով	Ընդհանուր ժողովի մասին	Տեղեկատվություն Ընդհանուր ժողովի գործառույթների և գործունեության կարգի վերաբերյալ
		Ընդհանուր ժողովի գումարում	Տեղեկատվություն Ընդհանուր ժողովի գումարման մասին
		Կարգապահական հարցերի հանձնաժողով	Տեղեկատվություն կարգապահական հարցերի հանձնաժողովի գործառույթների և գործունեության կարգի, նիստերի, որոշումների վերաբերյալ
		Ուսումնական հարցերի հանձնաժողով	Տեղեկատվություն ուսումնական հարցերի հանձնաժողովի գործառույթների և գործունեության կարգի, նիստերի, որոշումների վերաբերյալ
		Ժողովի որոշումներ	Ընդհանուր ժողովի որոշումներ
2.4.	Դատական դեպարտամենտ (Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ)	Կանոնադրություն և կառուցվածք Կանոնադրություն Կառուցվածքի գծապատկեր	
		Դեպարտամենտի ղեկավար	Դեպարտամենտի ղեկավարի անունը, ազգանունը, կենսագրական տվյալները, ուղերձները, շնորհավորանքները, ելույթները, հարցազրույցները
		Դեպարտամենտի կենտրոնական մարմին	Տեղեկատվություն Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների վերաբերյալ, դրանց ղեկավարների անունները, ազգանունները, կոնտակտային տվյալները

		Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներ	Տեղեկատվություն Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների վերաբերյալ, դրանց ղեկավարների անունները, ազգանունները, կոնտակտային տվյալները
		Նամակ ԲԴԽ աշխատակազմին	Առցանց նամակագրության համակարգ
2.5.	Նորություններ		Տեղեկատվություն դատական իշխանության ընթացիկ գործունեության մասին
2.6.	Իրավական ակտեր		Ներպետական իրավական ակտեր
2.7.	Մշտադիտարկում	Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ	Տեղեկատվություն մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ
		Մասնագիտացված դատարաններ	Տեղեկատվություն մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ
		Վերաքննիչ դատարաններ	Տեղեկատվություն մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ
		Վճռաբեկ դատարան	Տեղեկատվություն մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ
		Վերջնական դատական ակտերի կատարում	Տեղեկատվություն մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ
		Նոր հանգամանքների հիմքով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և ՀՀ ՍԴ որոշումների կատարման վիճակը	Տեղեկատվություն մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ
2.8.	Վիճակագրություն	Համեմատական վիճակագրական վերլուծություն	ՀՀ դատարանների գործունեության վիճակագրական տվյալների համեմատականը նախորդ հաշվետու ժամանակահատվածի վիճակագրական տվյալների հետ
		Ընդհանուր իրավասության դատարանների գործունեության	Ընդհանուր իրավասության դատարանների գործունեության վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվություններ՝ ըստ

	վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվություններ	ընդհանուր իրավասության յուրաքանչյուր դատարանի, դատավորի և գործերի առանձին տեսակների, ինչպես նաև դատապարտյալների և անչափահաս դատապարտյալների վերաբերյալ հաշվետվություններ
	Մասնագիտացված դատարանների գործունեության վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվություններ	ՀՀ վարչական դատարանի գործունեության վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվություններ՝ ըստ դատարանի և յուրաքանչյուր դատավորի
	Վերաքննիչ դատարանների գործունեության վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվություններ	Վերաքննիչ դատարանների գործունեության վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվություններ՝ ըստ դատարանի և յուրաքանչյուր դատավորի
	Վճռաբեկ դատարանի գործունեության վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվություններ	Վճռաբեկ դատարանի գործունեության վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվություններ՝ ըստ յուրաքանչյուր պալատի
	ՀՀ դատարանների բյուջե	Տեղեկատվություն դատարանների բյուջեի վերաբերյալ, այդ թվում՝ ֆինանսական ծախսերի համեմատականը նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ՝ ըստ դատարանների, դատավորների միջին աշխատավարձը և դրա համեմատականը նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ
	Պետական տուրք	Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող



			<p>փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար վճարված և դատական ակտով վճարման ենթակա պետական տուրքի ընդհանուր չափը և դրա համեմատականը նախորդ տարվա տվյալների հետ</p>
		<p>Դատավորների կարգապահական պատասխանատվություն</p>	<p>Դատավորների կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման մասերով՝ հարուցված կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման վարույթների քանակները՝ ըստ վարույթ հարուցած սուբյեկտների և վարույթի հարուցման հիմքերի, կարճված վարույթներով գործերի քանակները՝ ըստ վարույթ հարուցած սուբյեկտների, կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման դեպքերի քանակները և դատավորի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքի (ներառյալ՝ տույժի տեսակի) վերաբերյալ տվյալներ և այդ տվյալների համեմատականը նախորդ տարվա տվյալների հետ</p>
2.9.	Գրադարան	Տարեկան հաղորդումներ	Դատական իշխանության գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումներ
		Իրավական ռեսուրսներ	Իրավական տեղեկատվական համակարգերի հղումներ, թեմատիկ գրականության ցանկեր
		Էլեկտրոնային գրադարան	Էլեկտրոնային (թվայնացված) գրքեր, հրապարակումներ
		Տեսանյութեր/ Վիրտուալ պատկերասրահ	Դատական իշխանության գործունեությունը լուսաբանող տեսանյութեր, լուսանկարներ

2.10.	Միջազգային համագործակցություն		Տեղեկատվություն միջազգային կառույցների հետ համագործակցության, միջազգային կառույցների կողմից իրականացվող միջազգային ծրագրերին (միջոցառումներին) բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատավորների, դատական ծառայողների մասնակցության վերաբերյալ
2.11.	Պաշտոնական հայտարարություններ	Բարձրագույն դատական խորհրդի նախագահի հայտարարություններ	Տեղեկատվություն Խորհրդի նախագահի հայտարարությունների վերաբերյալ, այդ թվում՝ դատավորների լիազորությունները դադարելու վերաբերյալ
		Դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ցուցակների կազմման վերաբերյալ հայտարարություններ	Տեղեկատվություն դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների ցուցակների կազմման վերաբերյալ, այդ թվում՝ տեղեկություններ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները, վայրը, համալրման ենթակա տեղերի քանակը՝ ըստ դատավորների թեկնածուների ցուցակի մասնագիտացման բաժինների
		Դատարանների կողմից տրվող հայտարարություններ	Տեղեկատվություն դատարանների կողմից տրվող հայտարարությունների վերաբերյալ
		Դեպարտամենտում թափուր պաշտոններ	Տեղեկատվություն թափուր պաշտոնների ցանկի և դրանց ներկայացվող պահանջների, աշխատանքի վերաբերյալ
		Այլ տեղեկատվություն	Ընդհանուր բնույթի տեղեկություններ
2.12.	Դատավորների թափուր հաստիքներ		Տեղեկատվություն դատական համակարգում առկա դատավորների թափուր հաստիքների վերաբերյալ

2.13.	Մրցույթներ	Գրավոր քննություն Գրավոր քննության նմուշ օրինակներ Անցկացման կարգը Արդյունքները	Տեղեկատվություն դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար անցկացվող գրավոր քննության ժամանակի և վայրի վերաբերյալ, գրավոր քննության նմուշ օրինակների և արդյունքների վերաբերյալ
		Հարցազրույց Անցկացման կարգը Արդյունքները	Տեղեկատվություն դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար հարցազրույց անցկացնելու ժամանակի և վայրի վերաբերյալ, արդյունքների վերաբերյալ
2.14.	Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակների կազմման վերաբերյալ հայտարարություններ	Վճռաբեկ դատարան	Տեղեկատվություն Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը համալրելու անհրաժեշտության վերաբերյալ
		Վերաքննիչ դատարաններ	Տեղեկատվություն վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինը հաշվարկված թվով համալրելու անհրաժեշտության վերաբերյալ
2.15.	Դատական իշխանության ծախսեր	Բարձրագույն դատական խորհրդի ծախսեր	Տեղեկատվություն պետական բյուջեից հատկացված միջոցների և փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ
		Դատարանների ծախսեր	Տեղեկատվություն պետական բյուջեից հատկացված միջոցների և փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ
2.16.	Դատական գործեր	Տեղեկատվություն դատական գործերի ընթացքի վերաբերյալ	Տեղեկատվություն դատական գործերի քննության կապակցությամբ նշանակված դատական նիստերի ժամանակի և վայրի վերաբերյալ, դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտեր, օրենքով կամ Խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում այլ դատական ակտեր

2.17.	Էլեկտրոնային փաստաթղթեր	Էլեկտրոնային հայցադիմումներ	Էլեկտրոնային եղանակով դատարան հայցադիմում (դիմում) ներկայացնելու հնարավորություն
		Այլ դատավարական փաստաթղթեր	Էլեկտրոնային եղանակով այլ փաստաթղթեր դատարան ներկայացնելու հնարավորություն
2.18.	ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատավորների հերթապահության ժամանակացույց		Տեղեկատվություն մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող առաջին ատյանի դատավորների հերթապահությունների ժամանակացույցի, ինչպես նաև ժամանակացույցով հերթապահությանը ներգրավված դատավորների նստավայրերի վերաբերյալ
2.19.	ՀՀ դատավորների ամենամյա արձակուրդների տրամադրման ժամանակացույց		Տեղեկատվություն ՀՀ դատավորների ամենամյա արձակուրդների տրամադրման ժամանակացույցի վերաբերյալ
2.20.	Հղումներ		Հղումներ Հայաստանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության և այլ պետական մարմինների պաշտոնական կայքերին
2.21.	Ռեյտինգներ		Տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, այդ թվում դատարանների պաշտոնական կայքերի արժեքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավական ռեսուրսների էլեկտրոնային ներկայացուցչությունների, միջազգային իրավական կազմակերպությունների էլեկտրոնային ներկայացուցչությունների

			վիրտուալ ինտելեկտուալ կապիտալի վարկանիշների վերաբերյալ
2.22.	Դատավորների անկախության եվրոպական չափորոշիչները		Տեղեկատվություն դատավորների անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ
2.23.	Ի գիտություն դատավորների		Տեղեկատվություն դատավորներին և (կամ) դատավորի թեկնածուներին վերաբերող հայտարարությունների մասին
2.24.	Մեդիա	Հրապարակումներ Համագործակցություն Հավատարմագրում Սեմինարներ, համատեղ քննարկումներ	Դատական իշխանության գործունեությունը լուսաբանող հրապարակումներ, սեմինարներ, քննարկումներ